ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍՊԱՐՏԱԿԻ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդում։

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Համբարձումյան Անահիտ Համբարձումի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆ.
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հակոբջանյան Աննա Հովիկի

Առաջատար կազմակերպություն՝
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. հուլիսի 7-ին ժամը 15^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում։

Հասցեն՝ 0009, ք.Երևան, Աբովյան 52։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ -ի գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2015թ.-ի հունիսի 6-ին։

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Զբաղվածության ոլորտը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներքին անվտանգության ու կայունության ապահովման գրավականներից մեկն է: Զբաղվածության կառուցվածքը հեռանկարում փոփոխման է ենթարկվում, և մշտապես անհրաժեշտություն է առաջանում առաջադրել կանխատեսման ու կառավարման նոր մոտեցումներ և ունենալ գիտական եզրահանգումներ դրանց վերաբերյալ:

Զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորումը ենթադրում է որոշակի համամասնությունների ապահովում՝ տնտեսության կառուցվածքի, աշխատաշուկայի և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների միջև: Որքան մեծ է համապատասխանությունն աշխատաշուկայի և մասնագիտական կառուցվածքները պայմանավորող բնութագրերի միջև, այնքան բարձր է մարդկային կապիտալի հատույցը: Միևնույն ժամանակ, տնտեսության ճյուղային կառուցվածքին համահունչ զբաղվածության կառուցվածքի ձևավորումը պայմանավորում է արդյունավետ զբաղվածության հիմնախնդրի լուծումը: Վերոնշյալ համամասնությունների ապահովման հիմքում պետք է դրվեն տնտեսական զարգացման օրինաչափություններին և աշխատաշուկայի իրավիճակային փոփոխություններին ներդաշնակ զբաղվածության մասնագիտական կառուցվածքի փոփոխությունների կանխատեսումները:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում է տեղեկատվական: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը, ավելի ու ավելի շատ մարդիկ են ներգրավվում տեխնոլոգիապես բարդ մտավոր-ստեղծագործական աշխատանքի ոլորտ: Որակյալ մասնագետների պահանջարկն աճում է, առաջնահերթ կարևորություն են ձեռք բերում աշխատանքի շուկայի պահանջներին արագ հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունները:

Հետազոտության օբյեկտը՝ ՀՀ տնտեսությունում զբաղվածության կառուցվածքն է:

Հետազոտության առարկան՝ կառուցվածքային փոփոխությունների ազդեցությամբ զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորումը պայմանավորող գործոնների ու միջոցառումների ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է վերլուծել ՀՀ տնտեսությունում զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորման գործոնները և առաջադրել համապատասխան միջոցառումներ հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ: Դրված նպատակին

հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ **խնդիրները**.

- դիտարկվել են զբաղվածության հասկացության սոցիալ-տնտեսական առումները,
- քննարկվել է տնտեսության կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը զբաղվածության կառուցվածքի ձևավորման վրա,
- առանձնացվել են զբաղվածության մասնագիտական կառուցվածքի վրա ազդող գործոնները՝ գլոբալ, մակրոտնտեսական և միկրոտնտեսական մակարդակներում,
- քննարկվել է զբաղվածության կառուցվածքի ձևավորման միջազգային փորձը,
- վերլուծվել են ՀՀ աշխատանքի շուկայի զարգացման միտումները և զբաղվածության դինամիկան,
- նախանշվել են զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորման ուղիները:

Հետազոտության տեսական հիմքը կազմում են զբաղվածության վերաբերյալ տնտեսագիտական մտքի ականավոր ներկայացուցիչների աշխատանքները սկսած նեոդասականներից (Ա.Սմիթ, Դ.Ռիկարդո, Ա.Մարշալ, Ա.Պիգու) և ներառյալ մարքսյան, քեյնսյան, մոնետարիստական (Ա.Ֆիլիպպե, Ֆ.Հայեկի, Մ.Ֆրիդմեն) ուղղությունների ներկայացուցիչների աշխատությունները, ինչպես նաև հայազգի հետազոտողներ՝ Գ.Ղարիբյանի, Վ.Խոջաբեկյանի, Հ.Սարգսյանի, Ա.Մարկոսյանի, Մ.Պետրոսյանի, Ա.Մելքումյանի, Ա.Համբարձումյանի, Ռ.Գևորգյանի և այլոց աշխատանքները: Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների հիմնախնդրին անդրադարձել են Դ.Բելլը, Է.Տոֆֆլերը, Կ.Կլարկը, Ս.Կուզնեցը, Վ.Ինոզեմցևը և այլոք: Համակարգված վերլուծության նպատակով ուսումնասիրվել է կառուցվածքային և զբաղվածության քաղաքականությունների միջազգային փորձը:

Հետազոտության մեթոդական հիմքն են համակարգային և գործոնային վերլուծության, տեսական ընդհանրացման, համեմատական վերլուծությունների և տնտեսամաթեմատիկական մոդելավորման մեթոդները:

Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ԱՎԾ-ի, Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներն ու նորմատիվ փաստաթղթերը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներն ու հայեցակարգերը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և աշխատանքի շուկայի գործունեությանն առնչվող այլ ամփոփ տվյալներ:

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը արտահայտվում է հետևյալ արդյունքներում.

- տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համատեքստում

ներկայացնելով զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորման հիմնախնդիրը, առանձնացվել են կառուցվածքային տեղաշարժերի մասնագիտական որակավորման բնութագրիչները՝ գիտելիքները, հմտությունները, աշխատանքային փորձը և այլն,

- կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը գնահատելու նպատակով, հետազոտվող չորս երկրների կտրվածքով (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա) առաջադրվել ու հաշվարկվել են աշխատաշուկայի, ՀՆԱ և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների կառուցվածքային փոփոխությունները արտացոլող գործակիցները,
- զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորման ձևաչափում առաջարկվել է համապատասխան կառուցակարգի ներդրում, որը ենթադրում է որոշակի համամասնությունների ապահովում տնտեսության կառուցվածքի, աշխատաշուկայի և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների միջև,
- մասնագիտական կադրերի պատրաստման պահանջարկի առավել ռացիոնալ բավարարման նպատակով առաջարկվել է գործիքակազմ, որը պետական պատվերի ձևավորումը կապակցում է տնտեսության ճյուղային կառուցվածքի հետ:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները, կատարված վերլուծությունները և առաջարկություններն ու մոտեցումները կարող են կիրառվել ՀՀ տնտեսությունում զբաղվածության ծրագրերի մշակման գործընթացում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, արհեստակցական և գործատուների միությունների, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության, ինչպես նաև հայրենական այլ հետազոտողների ու մասնագետների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնում: Հետազոտության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրապարակված 3 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում 112 էջ (առանց հավելվածների), պարունակում է 20 աղյուսակ և 18 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքների գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Զբաղվածության կառուցվածքի հիմնահարցը տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համատեքստում» ***գլխում*** տեսական մակարդակով քննարկվել են զբաղվածության սոցիալ-տնտեսական առումները, առանձնացվել են «լրիվ զբաղվածություն» և «արդյունավետ զբաղվածություն» հասկացությունները: Թեև «արդյունավետ զբաղվածություն» հասկացությունն ունի ինքնուրույն նշանակություն, սույն աշխատանքում այն քննարկման առարկա է դարձել տնտեսությունում արդյունավետ կառուցվածք ունենալու հանգամանքի հետ կապված, քանզի գիտատեխնիկական առաջընթացը թույլ է տալիս առաջադեմ տեխնիկայի, տեխնոլոգիաների, արդյունավետ հումքատեսակների օգտագործմամբ, աշխատանքի գիտական կազմակերպմամբ և այլն, ունենալ նույն արդյունքը համեմատորեն քիչ ծախսումներով: Աշխատաքում որպես զբաղվածության կառուցվածքի ձևավորման նախադրյալ առանձնացվել է տնտեսության կառուցվածքային փոփոխությունների գործընթացը: Տնտեսական զարգացման յուրաքանչյուր մակարդակում ձևավորվում է որոշակի ճյուղային կառուցվածք, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան զբաղվածության կառուցվածքի ձևավորում:

Կառուցվածքային փոփոխությունները տարբեր դրսևորումներով արտացոլվում են աշխատաշուկայի կառուցվածքի և զբաղվածության մակարդակի վրա: Ակնհայտ է, որ կառուցվածքային տեղաշարժերի արդյունքում վերափոխված աշխատանքային հարաբերությունները տնտեսական իրավիճակի փոփոխություններ են առաջադրում, որոնք կարող են տարածվել և ընդգրկել տնտեսության ամենատարբեր ոլորտները: Հետևապես, աշխատաշուկայում վերափոխումները ենթադրում են կառուցվածքային և ենթակառուցվածքային ձևափոխումներ, ինչը պահանջում է նպատակամետ կառուցվածքային և զբաղվածության քաղաքականությունների իրագործում:

Զբաղվածության մասնագիտական կառուցվածքի կատարելագործման հիմնախնդիրը կարելի է քննարկել տարբեր առումներով: Հիմնախնդրի լուծման մոտեցումներն արևմտյան հետազոտողները դասակարգում են հետևյալ գործոնների համախմբով.

- մասնագիտական շարժունակության հետազոտության մեթոդներ,
- սոցիալ-ժողովրդագրական գործոնների ազդեցության վերլուծությունը զբաղվածության կառուցվածքի վրա: Որպես այդպիսիք կարող են հանդես գալ աշխատանքային ռեսուրսների սեռատարիքային կազմը,

միգրացիան, որը զբաղվածության կառուցվածքի ձևավորման վրա կարող է ազդեցություն ունենալ և՝ որպես պատճառ, և՝ որպես հետևանք:

- մասնագիտական բնութագրիչները և աշխատատեղի բնութագիրը,
- ճյուղային փոփոխությունները (տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը),
- մասնագիտական շարժունակության առանձնահատկությունները սերունդների միջև,
- մասնագիտական կառուցվածքի ձևավորման վրա անհատի հմտությունների, ունակությունների, ճկունության, հարմարվողականության, ստեղծագործական մտածողության ազդեցությունների այլ մասնագիտությամբ աշխատելու դեպքում և այլ գործոններ:[1]

Արևմտյան մասնագիտական գրականությունում, աշխատանքային և մասնագիտական շարժունակության վերլուծության ժամանակ հետազոտողները խնդրի լուծման տարբեր մոտեցումներ են ներկայացրել: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել Mark Becker և Michael Sobel[2] աշխատանքները, որոնք առնչվում են մասնագիտական շարժունակության մեթոդաբանական առանձնահատկություններին, ինչպես նաև Didier Balsani, Said Hanchane, Patrick Werquin[3] վերլուծությունները, որտեղ քննարկվում է անհատական բնութագրիչների, մասնավորապես՝ կրթության և աշխատանքային փորձի ազդեցությունը մասնագիտական շարժունակության վրա: Որոշ հեղինակներ զբաղվածության մասնագիտական կառուցվածքի ձևավորումը դիտարկում են սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների տեսանկյունից: Նման մոտեցում կիրառվել է Anne Beason Royaty[4] հետազոտություններում՝ աշխատանքային և մասնագիտական շարժունակությունը դիտարկելով սեռատարիքային և կրթական մակարդակի ազդեցության տեսանկյունից:

Կանադացի հետազոտող David Green[5] մասնագիտական կառուցվածքի ձևավորումը դիտարկում է միգրացիոն գործընթացների ազդեցության տեսանկյունից: J. Coghlan[6] զբաղվածության կառուցվածքը դիտարկում է մարդկային կապիտալի ձևավորման տեսանկյունից՝ առանցքային համարելով աշխատողի մասնագիտական որակավորումը, հմտությունները,

---

[1] Фомина Ю.В., Причинный анализ в прогнозировании профессональной структуры населения, Математическое и компьютерное моделирование социально-экономических процессов, Сборник статей, Выпуск 3, М., 2004, с. 76-77.

[2] Sobel M.E., Becker M.P., Minick S.M., Origins, Destinations and Association in Occupational Mobility, American Journal of Sociology, 1998, Vol 104, N 3, P. 687-721.

[3] Balsam D., Hanchane S., Werquin P., Mobilite Professionnelle Initiale: Education et Experience sur le Marche du Travail, Economie et Statistique , 1996, N 299 , P. 91-106.

[4] Royalty A.B., Job-to-Job and Job-to-Unemployment Turnover by Gander and Education Level, Journal of Labor Economics, 1998, N 2, P. 392-443.

[5] Green A.D., Immigrant Occupational Attainment: Assimilation and Mobility over Time, Jornal of Labor Economics, 1999, N 1, P. 49-79.

[6] Stu, Coghlan Y.E., Occupational Mobility of Australia's Vietnamese Community: Its Direction and Humain Capital Determinants, International Migration Review , 1998, N 121, P. 175-201.

ունակությունները, ճկունությունը, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունները աշխատանքի բնույթի (մասնագիտության) փոփոխության դեպքում:

Գծապատկեր 1. ***Զբաղվածության կառուցվածքի ձևավորումը պայմանավորող գործոնները***[7]

[7] Մասնագիտական գրականությունում, զբաղվածության կառուցվածքի ձևավորումը մասնագետների կողմից դիտարկվում է տարբեր գործոնների ազդեցության տեսանկյունից: Աշխատանքում փորձ է արվել ներկայացնել գործոնների այնպիսի դասակարգում, որոնք մի կողմից առավել ընդհանրական են, մյուս կողմից առավել բնորոշ անցումային տնտեսությունների համար:

Ընդհանուր առմամբ, զբաղվածության կառուցվածքի ձևավորման վրա ազդում են տարբեր գործոններ, որոնց դասակարգումը տրված է գծապատկեր 1-ում:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսության և զբաղվածության կառուցվածքային փոփոխությունների միտումները» ***գլխում,*** ուսումնասիրվել և վերլուծվել են զբաղվածության կառուցվածքի ձևավորման միջազգային փորձը և առանձնահատկությունները, համեմատական վերլուծություն է կատարվել Հայաստանի, նախկին խորհրդային միության որոշ երկրների աշխատաշուկայի և տարածաշրջանի երկրների աշխատաշուկայի և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների միջև:

Տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունները չեն կարող ընթանալ առանց համապատասխան փոփոխությունների աշխատանքի շուկայում: Հետևաբար, տնտեսության կառուցվածքի և աշխատանքի շուկայի կառուցվածքի միջև պետք է լինեն որոշակի կապեր, որոշակի կառուցվածքային համապատասխանություններ: Ավելին, այդպիսի համապատասխանությունների բացակայությունը կարող է լուրջ խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ: Կառուցվածքային անհամապատասխանությունների սահմանումը, հայտնաբերումը և հետազոտումը բավականին բարդ և բազմագործոն խնդիր է: Յուրաքանչյուր տնտեսության համար այն կարող է կախված լինել տարբեր գործոններից: Այնուհանդերձ, համեմատական վերլուծությունները թույլ են տալիս գտնել որոշակի օրինաչափություններ,, որոնք, իրենց հերթին, թույլ են տալիս անել եզրակացություններ առանձին երկրների կառուցվածքային անհամապատասխանությունների մասին: Զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորման նկատառումով, զբաղվածության կառուցվածքը պետք է կապել տնտեսության կառուցվածքի և տնտեսության ընդհանուր ու ճյուղային արդյունավետության հետ: Այս հարթությունում կարևոր է համեմատել **տնտեսության ճյուղային, աշխատաշուկայի և մասնագիտական կառուցվածքները**:

Կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը պատկերացնելու նպատակով, չորս հետազոտվող երկրների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա) համար հաշվարկվել են աշխատաշուկայի, ՀՆԱ-ի և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների կառուցվածքային փոփոխությունների գործակիցները: Յուրաքանչյուր տարվա համար (2011-2013թթ.) հաշվարկվել են երկրների փոխադարձ կառուցվածքային գործակիցները, որոնք ցույց են տալիս համեմատվող երկրների կառուցվածքային տարբերությունները:



Գծապատկեր 2. ***Կառուցվածքային տեղաշարժերի գործակիցը աշխատաշուկայի կառուցվածքային վեկտորի համար***[8]

Ստորև ներկայացված աղյուսակ 1-ից հետևում է, որ աշխատաշուկայի կառուցվածքը դիտարկված նախկին խորհրդային երկրներում շատ ավելի մոտ են իրար, քան նույն ցուցանիշը Թուրքիայի համար: Բացի այդ հետաքրքիր է նշել նաև, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև փոխադարձ կառուցվածքային գործակիցը շատ ավելի փոքր է, քան Ադրբեջան/Ղազախստան ցուցանիշը: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, այս պարագայում տարածաշրջանային օրինաչափություններն ավելի կարևոր են:

Աղյուսակ 1

Հայաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքիայի աշխատաշուկայի կառուցվածքի փոխադարձ կառուցվածքային գործակիցները[9]

	Հայաստան	Ադրբեջան	Ղազախստան	Թուրքիա
Հայաստան	-	2.24739	9.96556	17.03309
Ադրբեջան	2.24739	-	9.75321	20.82736
Ղազախստան	9.96556	9.75321	-	10.57192
Թուրքիա	17.03309	20.827355	10.57192	-

Կառուցվածքային տեղաշարժերի մասին գաղափար կազմելու համար դիտարկվել են կառուցվածքային փոփոխությունների գործակիցները

[8] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

[9] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա:

տարեկան կտրվածքով:



Գծապատկեր 3. ***Կառուցվածքային տեղաշարժերի գործակիցը ՀՆԱ կառուցվածքային վեկտորի համար***[10]

ՀՆԱ կառուցվածքային փոփոխությունների գործակիցները շատ ավելի մեծ են, քան նույն ժամանակահատվածի համար հաշվարկված աշխատաշուկայի կառուցվածքային գործակիցները: Համեմատելով համապատասխան գծապատկերները կնկատենք, որ այդ տարբերությունները բավականին մեծ են բոլոր չորս հետազոտվող երկրների համար: Այս հանգամանքը որոշ չափով բացատրվում է նրանով, որ մի դեպքում (ՀՆԱ-ի կառուցվածք) մենք օգտվում ենք ագրեգացված տվյալներից, իսկ մյուս դեպքում՝ ոչ ագրեգացված տվյալներից: Այնուհանդերձ, կարող ենք արձանագրել, որ հետազոտվող ժամանակաշրջանում, որը կարելի նաև բնութագրել որպես հետճգնաժամային, կառուցվածքային տեղաշարժերը ՀՆԱ-ում շատ ավելի մեծ են, քան աշխատաշուկայի կառուցվածքում:

Հետաքրքիր է նաև կառուցվածքային տեղաշարժերի դինամիկայի համեմատությունը: Եթե Հայաստանում հետազոտվող ժամանակահատվածում կառուցվածքային տեղաշարժերը թե' ՀՆԱ-ում, թե' աշխատաշուկայում տարեցտարի փոքրացել են, ապա մյուս երկրներում այդ գործընթացը չի ունեցել ընդգծված տրենդ: Միևնույն ժամանակ, Հայաստանի կառուցվածքային տեղաշարժերը 2010թ. թե' ՀՆԱ-ում, թե' աշխատաշուկայում եղել մի քանի անգամ ավելի բարձր, քան մյուս երկրներում: Այս հանգամանքով էլ հենց բացատրվում է Հայաստանի կառուցվածքային տեղաշարժերի գործակցի նվազող տրենդը թե' ՀՆԱ-ում, թե' աշխատաշուկայում:

Ինչպես և աշխատաշուկայի կառուցվածքի դեպքում, այնպես էլ ՀՆԱ կառուցվածքի համար դիտարկվել են փոխադարձ կառուցվածքային գործակիցները հետազոտվող երկրների համար:

[10] Գծապատկերը ստացվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 2

Հայաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքիայի ՀՆԱ-ի կառուցվածքի փոխադարձ կառուցվածքային գործակիցները[11]

	Հայաստան	Ադրբեջան	Ղազախստան	Թուրքիա
Հայաստան	-	468.6341	151.011	172.9882
Ադրբեջան	468.6341	-	435.4441	755.9768
Ղազախստան	151.011	435.4441	-	49.38904
Թուրքիա	172.9882	755.9768	49.38904	-

Աղյուսակից երևում է, որ այս դեպքում արդեն նախկին խորհրդային երկրների ՀՆԱ-ի կառուցվածքներն իրար մոտ չեն, ինչպես դա ստացվել էր աշխատաշուկայի կառուցվածքի համար: Ադրբեջանի ՀՆԱ կառուցվածքը խիստ տարբերվում է մյուս երկրների կառուցվածքից:

Աղյուսակ 3

Զբաղվածության մասնագիտական կառուցվածքը հետազոտվող երկրներում 2013թ.(%)[12]

	Հայաստան	Ադրբեջան	Ղազախստան	Թուրքիա
Զինված ուժեր	1.97	0.2	0.44	-
Ղեկավարներ	8.11	1.3	5.38	5.04
Մասնագետներ՝ բարձր որակավորման	11.56	12.7	15.93	8.86
Մասնագետներ՝ տեխ-նիկական մակարդակի	7.22	9.4	11.02	5.27
Գործավարներ	3.07	5	3.87	6.41
Աշխատողներ՝ առևտրի և սպասարկման ոլորտի	9.54	12.3	15.14	17.89
Աշխատողներ՝ գյուղա-տնտեսության, անտառ-տնտեսության և ձկնաբու-ծության ոլորտների	36.85	29.8	10.11	18.86
Աշխատողներ՝ առևտրի և սպասարկման ոլորտի	9.98	6.8	9.94	13.68
Օպերատորներ, ապարա-տավարներ, մեքենավարներ	4.42	7	6.36	9.73
Բանվորներ՝որակավորում չունեցող	5.9	15.5	21.82	14.26
Այլ	1.37	-	-	-

[11] Աղյուսակը կազմվել է հեղինակի հաշվարկների արդյունքում ստացված ցուցանիշներով:

[12] www.ilo.org, Հայաստանի զբաղվածության մասնագիտական կառուցվածքը ներկայացվել է 2011թ. մարդահամարի ցուցանիշներով:

Բավականին մեծ տարբերություններ կան նաև Հայաստանի և մյուս երկրների ՀՆԱ կառուցվածքում: Ամենամոտ կառուցվածքն ունեն Ղազախստանի և Թուրքիայի ՀՆԱ-ն: Իսկ ամենամեծ տարբերությունը գրանցվել է Թուրքիայի և Ադրբեջանի միջև (աղյուսակ 2):

Նմանատիպ վերլուծություններ տարվել են նաև զբաղվածության մասնագիտական կառուցվածքի վերաբերյալ: Հաջորդ աղյուսակում բերված է հետազոտվող երկրների զբաղվածության մասնագիտական կառուցվածքը, համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության դասակարգման:

Ատենախոսությունում բերված է հետազոտվող երկրների զբաղվածության մասնագիտական կառուցվածքի փոխադարձ կառուցվածքային գործակիցների մատրիցը՝ կառուցված նախորդ աղյուսակի տվյալների հիման վրա:

Ամփոփ տվյալները վկայում են, որ աշխատաշուկայի մասնագիտական կառուցվածքի փոխադարձ կառուցվածքային գործակիցները նկատելիորեն ավելի մեծ են, քան աշխատաշուկայի կառուցվածքի փոխադարձ կառուցվածքային գործակիցները: Սակայն, ինչպես և աշխատաշուկայի կառուցվածքի համար մասնագիտական կառուցվածքի տեսանկյունից, ամենամոտը Հայաստանի և Ադրբեջանի տնտեսություններն են, չնայած վերջինիս նվազ դիվերսիֆիկացված լինելու պարագայում

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների անդրադարձը աշխատաշուկայի զարգացումների վրա», ***գլխում*** ներկայացվել են ՀՀ տնտեսական զարգացման օրինաչափությունները և զբաղվածության կառուցվածքի կատարելագործման հեռանկարները:

Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի բնույթով ու ինտենսիվությամբ պայմանավորված ձևավորվում է տնտեսության ճյուղային կառուցվածքը, որը ենթադրում է զբաղվածության համապատասխան կառուցվածքի ձևավորում: Զբաղվածության արդյունավետ կառուցվածքը պահանջում է որոշակի համամասնությունների ապահովում, որոնք վերջին հաշվով կբերեն տնտեսության կառուցվածքին ներդաշնակ մասնագիտական կառուցվածքի ձևավորման:

Անցումը տնտեսության գոյություն ունեցող կառուցվածքից առավել ցանկալի կառուցվածքին բարդ և բազմաֆունկցիոնալ գործընթաց է, որի իրագործման ընթացքը պարունակում է հետևյալ երկու եզրային դեպքերը.

- բնականոն ընթացք, երբ նվազագույն պետական միջամտությամբ աստիճանաբար ձևավորվում է բարձրարդյունավետ տնտեսություն՝ կատարյալ շուկայական մոդելին բնորոշ պայմանների բավարարմամբ,
- նախահարձակ ընթացք, ակտիվ պետական միջամտության գործիքակազմի գործադրմամբ՝ ձևակերպված ցանկալի մրցունակ կառուցվածքն ուղղորդելու, հասանելի դարձնելու պայմանների ապահով-

մամբ[13]:

Տնտեսության կառուցվածքափոխակերպման գործընթացը, բնականաբար, ենթադրում է կառուցվածքային և ենթակառուցվածքային ձևափոխումներ ու համապատասխան հետազոտություններ տնտեսության բոլոր ոլորտներում:

Զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորման տրամաբանությամբ, առաջարկվում է հետևյալ կառուցակարգի ներդրումը:



Գծապատկեր 4. ***Մասնագետների պատրաստման գործընթացը տնտեսության կառուցվածքափոխակերպման համակարգում***[14]

Առաջադրված մոտեցումները պահանջում են կառուցվածքային տեղաշարժերի այնպիսի փոփոխություններ, որոնք կնախանշեն ցանկալի կամ մրցունակ կառուցվածքին հասնելու մեթոդներն ու կառուցակարգերը: Կատարված դատողությունները և վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ տնտեսության կառուցվածքի փոխակերպման հիմնախնդիրը լուծելի է ներքոնշյալ ոլորտներում՝ պետական քաղաքականությամբ ուղղորդված հետազոտությունների, վերլուծությունների, կանխատեսումների իրականացման արդյունքում:

Ակնհայտ է, որ տնտեսական զարգացման յուրաքանչյուր փուլին հա-

[13] Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., «Զանգակ» հրատ., 2014, էջ 201:

[14] Գծապատկերը ստացվել է հեղինակի կողմից:

մամպատասխանում է զբաղվածության որոշակի կառուցվածք: Տնտեսական զարգացման միջազգային փորձը հավաստում է, որ որքան հավասարակշռված են տնտեսության, զբաղվածության և աշխատաշուկայի կառուցվածքները, այնքան հավասարակշռված ու կայուն է տնտեսությունը, բարձր են աշխատանքի արտադրողականությունը և մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետությունը: Զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորումն իրագործելի է միայն վերոնշյալ օրինաչափության ապահովման դեպքում: Խնդրի լուծման թիրախը՝ զբաղվածության մասնագիտական կառուցվածքի փոփոխությունների կանխատեսումներն են և աշխատաշուկայի իրավիճակային վերլուծությունները: Վերջին երկու տասնամյակների զարգացումները ինչպես աշխարհում, այնպես էլ մեր տարածաշրջանում, ցույց են տալիս, որ կառուցվածքային քաղաքականության որակը մեծապես ազդում է երկրների տնտեսական աճի միտումների վրա: Կառուցվածքային վերափոխումների անհրաժեշտությունն ի հայտ է գալիս հատկապես ճգնաժամերից հետո: 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ այդպիսի իրավիճակները պարզապես պարտադրում են ուղղումներ մտցնել պետական տնտեսական ծրագրերում՝ հաշվի առնելով կառուցվածքային տեղաշարժերի փաստը: Պատահական չէ, որ ճգնաժամային իրավիճակներում նույնիսկ հզոր տնտեսություն ունեցող երկրների ղեկավարները ստիպված են հայտարարել կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտության մասին: Օրինակ, Ռուսաստանը՝ Հայաստանի կարևորագույն ռազմավարական գործընկերը, 2015 թվականի սկզբին պաշտոնապես հայտարարեց, որ սկսում է կառուցվածքային փոփոխությունների նոր քաղաքականություն, որը պետք է արձագանքի նոր իրավիճակին, որն իր հերթին հետևանք է այսօր Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների, նավթի գների անկման և սպասվող տատանողականությանը:

Հայաստանը մուտք գործելով Եվրասիական տնտեսական միություն, անխուսափելիորեն ստիպված կլինի իրականացնել կառուցվածքային փոփոխություններ, թեկուզև միայն այն պատճառով, որ փոքր բաց տնտեսությունը միանալով խոշոր շուկաներին ստանում է հնարավորությունների և սահմանափակումների մի նոր համակարգ, որոնք անխուսափելիորեն ազդելու են ներքին տնտեսության կառուցվածքի վրա:

Կառուցվածքային քաղաքականությունը նախ և առաջ պետք է հանդիսանա տնտեսական զարգացման ծրագրերի բաղկացուցիչ մաս և արտացոլի այդ ծրագրերում նախանշված նպատակները: Միևնույն ժամանակ, կառուցվածքային քաղաքականությունը կարող է ունենալ հատուկ նպատակներ, որոնք բխում են ընդհանուր տնտեսական քաղաքականության նպատակներից, կառուցվածքային տեղաշարժերի իրավիճակային վերլուծությունից և հնարավոր կառուցվածքային շոկերի կանխատեսումներից: Կառուցվածքային քաղաքականությունը պետք է ունենա երեք հիմնական ուղղություն՝ ճյուղային կառուցվածք, աշխատաշուկայի կա-

ռուցվածք և մասնագիտական կառուցվածք: Քանի որ այս երեք գործոնները փոխկապակցված են, անհրաժեշտ է կատարել ինչպես առանձին վերլուծություններ, այնպես էլ փոխազդեցության հնարավոր մեխանիզմների վերլուծություններ: Կառուցվածքային քաղաքականության կարևորագույն մասն է հանդիսանում իրականացման գործիքակազմի ընտրությունը:



Գծապատկեր 5. ***Կառուցվածքային քաղաքականության մշակման գործընթացը***[15]

Կառուցվածքային քաղաքականության գլխավոր խնդիրն է այդ գործիքների ճիշտ ընտրությունը, հնարավոր արդյունքների կանխատեսումը և տարբեր գործիքների միաժամանակ գործածության կարողությունը: Պետության կողմից կիրառվող գործիքակազմից կարևորագույներից մեկն է հանդիսանում ՀՀ բուհերին հատկացված բակալավրի կրթական ծրագրով անվճար ուսուցման տեղերի բաշխումը: Այս գործիքը ուղղակիորեն ազ-

[15] Գծապատկերը ստացվել է հեղինակի կողմից:

դում է տնտեսության մասնագիտական և աշխատաշուկայի կառուցվածքների վրա, իսկ անուղղակիորեն նաև ճյուղային կառուցվածքի վրա:

Ընդհանուր առմամբ, պետական պատվերի կառուցվածքը բնութագրում է տնտեսության կառուցվածքը: Այսպես օրինակ, գյուղատնտեսության ոլորտում պետական պատվերը կազմում է ամբողջի շուրջ 7.5%, ինչը համապատասխանում է գյուղատնտեսության մեծ տեսակարար կշռին ինչպես ճյուղային, այնպես էլ աշխատաշուկայի կառուցվածքում: Տրամաբանական է թվում նաև տնտեսագիտության ոլորտում պետական պատվերի կրճատումը, որը պայմանավորված է այս ոլորտի նկատմամբ դիմորդների մեծ հետաքրքրվածությամբ և, որպես հետևանք, որակյալ կադրերի առկայություն՝ առանց պետական ռեսուրսների ծախսի: Միևնույն ժամանակ, բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում արվեստը և հումանիտար գիտությունները համատեղ՝ շուրջ 35%:

Գծապատկերում բերված են կառուցվածքային տեղաշարժերի գործակիցները ՀՀ աշխատաշուկայի (2011-20013թթ.) և բակալավրիատի պետական պատվերի (2012-2015թթ.) համար:



Գծապատկեր 6. ***Կառուցվածքային տեղաշարժերի գործակիցները ՀՀ աշխատաշուկայի (2011-2013թթ.) և բակալավրիատի պետական պատվերի (2012-2015թթ.) համար***[16]

Ինչպես երևում է գծապատկերից, 2011թ. աշխատաշուկայի կառուցվածքում տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր՝ պայմանավորված հիմնականում համաշխարհային ճգնաժամով: Այդ տեղաշարժերը հաջորդ երկու տարում սահուն մարել են: Պետական պատվերի կառուցվածքը նկատելիորեն փոխվել է 2012թ.՝ հետագա երեք տարիներին ունենալով շատ ավելի քիչ փոփոխություններ: Դժվար է միանշանակ պնդել, որ 2012թ. կառուցվածքային տեղաշարժը պետական պատվերի կառուցվածքում պայմանավորված է 2011թ. տեղի ունեցած աշխատաշուկայի կառուցվածքի փոփո-

[16] Գծապատկերը ստացվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների արդյունքում:

խությունով: Այնուհանդերձ, կառուցվածքային քաղաքականությունը պետք է այնպես մշակված լինի, որ կարողանա իր գործիքների միջոցով արձագանքել շուկայում տեղի ունեցող փոփոխություններին:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնք ներկայացված ե հետևյալ դրույթներում

- Գրեթե բոլոր երկրների համար պետական ծառայողների մասնաբաժինը զբաղվածության կառուցվածքում կազմում է շուրջ մեկ քարրորդ: Սա կարող է բացատրվել միանման կառավարման համակարգով:
- Դիտարկվող երկրների համար գյուղատնտեսությունում աշխատուժի մասնաբաժինը մեծ է: Բացի Բելառուսից և Ռուսաստանից այդ մասնաբաժինը մյուս երկրներում գերազանցում է 20 տոկոսը: Բացի Ռուսաստանից և Բելարուսից մնացած բոլոր երկրներում արդյունաբերության մասնաբաժինը ցածր է 15 տոկոսից:
- Ընդհանուր առմամբ, Հայաստանի զբաղվածության կառուցվածքը նման է անցումային երկրներում ձևավորված կառուցվածքին:
- Կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը պատկերացնելու նպատակով, չորս հետազոտվող երկրների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա) համար հաշվարկվել են աշխատաշուկայի, ՀՆԱ և զբաղվածության մասնագիտական կառուցվածքների կառուցվածքային փոփոխությունների գործակիցները: Ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում կատարել հետևյալ եզրահանգումները.
- Դիտարկվող ժամանակահատվածում տեղաշարժերը Հայաստանի աշխատաշուկայի կառուցվածքում անհամեմատ ավելի մեծ են, քան համեմատվող երկրներում:
- Աշխատաշուկայի կառուցվածքը նախկին խորհրդային երկրներում շատ ավելի մոտ են իրար, քան նույն ցուցանիշը Թուրքիայում: Հայաստանի և Ադրբեջանի միջև փոխադարձ կառուցվածքային գործակիցը շատ ավելի փոքր է, քան Ադրբեջան/Ղազախստան ցուցանիշը:
- ՀՆԱ կառուցվածքային փոփոխությունների գործակիցները շատ ավելի մեծ են, քան նույն ժամանակահատվածի համար հաշվարկված աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխությունների գործակիցները: Այդ տարբերությունները մեծ են բոլոր չորս երկրների համար: Բավականին մեծ տարբերություններ կան Հայաստանի և մյուս երկրների ՀՆԱ կառուցվածքում:

Տնտեսության կառուցվածքափոխակերպման գործընթացը, բնականաբար, եթադրում է կառուցվածքային, ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ ձևափոխումներ և համապատասխան հետազոտություններ տնտեսության բոլոր ոլորտներում: Առաջադրված մոտեցումներն ենթադրում են կառուցվածքային տեղաշարժերի այնպիսի փոփոխություններ, որոնք կնախանշեն ցանկալի կամ մրցունակ կառուցվածքին հասնելու մեթոդներն ու կառուցակարգերը:

Ուսումնասիրվող թեմայի շրջանակներում կատարված դատողությունները և վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ տնտեսության կառուցվածքի փոխակերպման հիմնախնդիրը լուծելի է ներքոնշյալ ոլորտներում՝ պետական քաղաքականությամբ ուղղորդված հետազոտությունների, վերլուծությունների, կանխատեսումների իրականացման արդյունքում: Արդյունավետ ճյուղային կառուցվածքի ձևավորման գործընթացն ամբողջական է, կառուցվածքային վերափոխումները զուգորդվում են արդյունավետ կառավարմամբ:

Տնտեսության կառուցվածքափոխակերպման խնդրի լուծումը պահանջում է տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածքի ձևավորում՝ պայմանավորված աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, աշխատաշուկայի անհամապատասխանությունների համահարթեցմամբ, մարդկային կապիտալի զարգացմամբ, տնտեսության և աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համատասխան մասնագետների պատրաստման ինստիտուտի առկայությամբ: Այս տրամաբանությամբ աշխատանքում առաջարկվում է կառուցակարգ, որի գործոնությունների տրամաբանական հաջորդականությունը կապահովի զբաղվածության արդյունավետ կառուցվածքի ձևավորում:

Այսպիսով, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը համակարգելու և աշխատաշուկայի զարգացումներին արձագանքելու նկատառումով՝ անհրաժեշտ է սահմանել համագործակցության ձևաչափ կրթական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, գործատուների և աշխատանքի շուկան կարգավորող կառուցակարգերի միջև: Ձևավորված իրավիճակում առաջարկվում է հնավորություններ ստեղծել միջնաժամկետ հատվածում կանխատեսելու զբաղվածության դինամիկան ըստ մասնագիտությունների: Առաջնահերթ լուծում պահանջող խնդիր է դառնում պետական պատվերի ձևավորման ինստիտուտի և տնտեսության կառուցվածքի միջև առկա անհամապատասխանությունների հնարավորինս համահարթեցումը: Առանձնակի կարևորություն է ստանում մասնագիտական կրթությանը ներկայացվող որակական պահանջների սահմանումը:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Ղազարյան Տ. ,Մասնագիտական որակավորմանը և կրթությանը ներկայացվող շուկայական պահանջները, Բանբեր Երևանի համալսարանի, Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 52-56:
2. Ղազարյան Տ. ,Մասնագիտական կրթությունը և աշխատանքի շուկան Հայաստանում, Ֆինանսներ և էկոնոմիկա, ամսագիր N 5/155/ 2013, էջ 74-76:
3. Ղազարյան Տ. ,Զբաղվածության կառուցվածքը ՀՀ աշխատաշուկայում, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու, Եր., Անանիա Շիրակացի համալսարան, 2013, էջ 46-53:

КАЗАРЯН ТИГРАН СПАРТАКОВИЧ

ПРОБЛЕМА СОВЕРШЕНСТВОВАНИЯ СТРУКТУРЫ ЗАНЯТОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание учёной степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 7-го июля 2015г. в 15^{00} на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу: 0009, г.Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Каждому этапу экономического развития соответствует определенная структура занятости. Мировой опыт развития экономики показывает: чем выше сбалансированность между структурой занятости и структурой рабочих мест, тем выше экономическая эффективность использования человеческого капитала. В решении данной задачи большая роль отводится прогнозам изменения профессионально-отраслевой структуры занятости и анализу изменений рынка труда.

Целью диссертации является анализ и оценка изменений в профессионально-отраслевой структуре занятости Республике Армения, определение влияющих на нее факторов и разработка предложений по совершенствованию формирования эффективной структуры занятости. Исходя из этой цели в диссертационной работе решены следующие задачи:

- На теоретическом уровне рассмотрены социально-экономические аспекты категории занятости.
- В результате структурных изменений экономики выявлены основные факторы, влияющие на формирование структуры занятости РА.
- Проведён анализ воздействия глобальных, макроэкономических и микроэкономических факторов, влияющих на изменение структуры занятости.
- Проанализирован международный опыт в сфере формирования профессионально-отраслевой структуры занятости.
- Рассмотрены и проанализированы тенденции и динамика занятости на рынке труда РА.
- Разработаны и предложены основные направления и механизмы совершенствования и формирования эффективной структуры занятости.

Объектом исследования является структура занятости РА. **Предметом исследования** являются изменения в профессиональной структуре заня-

тости под воздействием структурных процессов и разработка соответствующих мероприятий по формированию эффективной структуры занятости.

Научная новизна диссертационной работы заключается в следующем:

- В процессе структурных изменений экономики обосновывается проблема необходимости формирования эффективной структуры занятости, с учётом факторов структурных сдвигов и профессионально-квалификационного потенциала работников.
- С целью оценки влияния структурных изменений, на примере четырёх стран (Армения, Азербайджан, Грузия и Турция) рассчитаны показатели структурных изменений рынка труда, ВВП и профессиональной структуры занятости, которые позволили выявить амплитуду структурных сдвигов.
- С целью совершенствования структуры занятости предложен соответствующий механизм, который позволяет выявить соответствие между структурой экономики, рынка труда и структурой профессиональной занятости.
- В целях наиболее рационального удовлетворения потребности по подготовке специалистов, предложен инструментарий, который согласовывает формирование госзаказа с отраслевой структурой экономики.

GHAZARYAN TIGRAN SPARTAK

EMPLOYMENT STRUCTURE IMPROVEMENT ISSUE IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract of the dissertation submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the field of 08.00.02 – "Economics,Management of the Economy and Its Sectors".

The defense of the dissertation will take place at 15^{00} on July 7, 2015 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

ABSTRACT

For each stage of economic development corresponds a certain structure of employment. The world experience of economic development shows the higher the balance between the employment and job structure the higher cost-effectiveness of using human capital. In solving this problem big role is given to the forecasts of professional branched structure employment changes and to the analysis of labor market changes.

The research aims to analyze the factors forming optimal employment structure in the economy of Armenia and to propose appropriate measures for solving the problem.

To achieve the goal, the following issues have been proposed and solved within the thesis:

- Socio-economic aspects of the employment concept have been considered
- The impact of the structural changes in economy in the formation of employment structure has been discussed
- Factors, affecting the professional structure of the employment at global, macroeconomic and microeconomic levels, have been distinguished
- International experience of the formation of employment structure has been discussed
- Trends of the labor market and employment dynamics of RA have been analyzed
- Ways of formation of effective structure of employment have been outlined

The research object is the employment structure in the economy of Armenia. **The research subject** is the changes in the professional employment structure under the impact of the structural processes and the development of appropriate measures for the formation of effective employment structure

The following are the main principles of **scientific innovation**:

- High importance is given to the issue of the formation of effective employment structure in the context of structural changes of economy. The role of the structural changes and the characteristics of the professional qualifications have been distinguished.
- To assess the impact of structural changes, the coefficients of structural changes of labor market, GDP and professional employment structures for four countries(Armenia, Azerbaijan, Georgia, Turkey), where the surveys are carried out, have been calculated. For each year (2011-2013) structural coefficients between countries have been calculated, which shows structural differences of the countries being compared.
- For the formation of effective employment structure, it is offered to input an appropriate structure, which supposes to ensure a certain balance among the structure of economy, labor market and employment professional structures.
- To meet the demands for performing professional projects in economy more rationally, a certain tool has been offered, which connects the formation of the state order with the branch structure of the economy.